ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ- 1/3-Լ
(Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին)

ք.Երևան 25.12.2022թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ինը անդամից կազմված հաշվիչ հանձնաժողովը (**այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով**), մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանի, անդամներ՝ Աշոտ Խլոյանի, Կարինե Ղաշանգյանի, Աստղիկ Գևորգյանի, Հեղինե Մանուկյանի, Նազիկ Մալխասյանի, Սաթենիկ Զաքարյանի և Էրիկ Պետրոսյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 9.1-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 15.25-րդ և 15.29-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով 24.12.2022 թվականին տեղի ունեցած ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցով քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 24.12.2022թ. թիվ 2-Լ/Վ արձանագրությունը,

նկատի ունենալով այն, որ՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 2541 փաստաբանից մասնակցել է 984 փաստաբան,

հիմք ընդունելով քվեարկության արդյունքներն առ այն, որ քվեարկության մասնակիցների կեսից ավելին՝ 810 ձայնով, կողմ է քվեարկել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցով,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել « Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 24.12.2022թ. քվեարկության արդյունքները, սահմանելով, որ քվեարկելու իրավունք ունեցող 2541 (երկու հազար հինգ հարյուր քառասունմեկ) փաստաբաններից քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 984 (ինը հարյուր ութսունչորս) փաստաբանների՝ 810 (ութ հարյուր տաս) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 82,3%) ձայներով ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից որոշումը համարվում է ընդունված (հաստատված):
2. Քվեարկելու իրավունք ունեցող 2541 (երկու հազար հինգ հարյուր քառասունմեկ) փաստաբաններից քվեաթերթիկներ ստացած ընդհանուր

984 (ինը հարյուր ութսունչորս) փաստաբանների՝ 810 (ութ հարյուր տաս) «Կողմ» (քվեաթերթիկ ստացածների 82,3%) ձայներով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից **հաստատել** ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի:

3. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Գևորգյան

Անդամներ՝

Աշոտ Խլոյան

Կարինե Ղաշանգյան

Աստղիկ Գևորգյան

Հեղինե Մանուկյան

Նազիկ Մալխասյան

Մաթենիկ Զաքարյան

Էրիկ Պետրոսյան